№ 124 Յուլիսի 8 (20) 1881 Յուլիսի 8 (20) № 124

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարարտադրացիր գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանչիր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարքի հրաժարականը։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր բարօն Նիկոլայ Թիֆլիսի մէջ։ Նամակ Ալէքսանդրապօլից։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Աւստրօ-Ունգարիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Թիւրքիայից։

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—

Եթէ հաւատանք մեր Կ. Պոլսի Թղթակցին, Ներսէս սրբազանի հրաժարականի պատճառը այն անտանելի բարոյական ղրութիւնն է, որի մէջ դրել են նրան Կ. Պոլսի էֆէնդիները, նրանց անհագ շահասիրութիւնը և անվերջանալի ինտրիգաները...

Ուրեմն իսկ այն ժամանակ, երբ պէտք է վճռվի հայոց խնդիրը, այն մարդիկ որոնք ազգի գոյութեան սիւներ են համարում իրանց, ամեն բան քանդում են, ձրգտելով միմիայն իրանց նեղ անձնական շահերին։ Նրանց խելքով ազգասէր լինել՝ նշանակում է պաշտպան հանդիսանալ Թիւրքաց շահերի, ազգօգուտ գործ կատարել՝ նշանակում է բռնել Բ. Դրան շահերի կողմը, իսկ ազգավնաս գործ նրանք անուանում են հայոց ազգին օգտակար, բայց իրանց գրպանին վնասակար գործը։

Ազգը նրանց կարծիքով՝ իրանց սեփական գրպանն է, ազդաշէն գործ կատարել՝ նշանակում է կառուցանել մի որ և է մզկիթ կամ պալատ սուլթանի կամ նրա հարեմի համար, ազգի պարծանքն այն է, երբ մի Աբրահամ փաշայի, Սարգիս բէյի կամ Յարութիւն էֆէնդիի կուրծքը զարդարվում է թիւրքաց պատւանշաններով։

Բայց այն երևոյթը որ 200,000 հայեր, հեռու իրանց հայրենիքից, սպառում են իրանց ոյժերը Կ. Պոլսի մէջ, գրկելով Հայաստանը ազգաբնակութեան աճելուց,—դա ազգավնաս երևոյթ չէ շահապաշտ էֆէնդիների կարծիքով։

Ինչպէս երևում է Կ. Պոլսի հարուստները սարսափեցան տեսնելով որ ճշմարիտ այսօր կամ վաղը պէտք է վճռվի հայոց խնդիրը, ուրեմն ծանրութեան կէտը իրանց ձեռքերից անցնելու է ժողովրդի ձեռքը, Կ. Պոլսից անցնելու է Հայաստան. նրանք այսպիսով կորցնելու են ամեն բան։ Աւելի լաւ է Հայաստանը կորչի, քան թէ մենք, մտածում են նրանք։ Եւ որովհետև Ներսէսը գլխաւոր և անխոնջ գործող է Թիւրքաց Հայաստանի ինքնավարութեան գաղափարի համար,—Նրան նախ և առաջ աշխատեցին վայր գցել, տեսնելով որ հայոց խնդիրը մտանում է իր վերջնական լուծման։

Երբ որ մենք «Մշակի» մէջ անդադար ասում էինք թէ Կ. Պոլսի ազգային ժողովը և նոյն իսկ Ներսէս պէտք է տեղափոխվէին Կ. Պոլսից Հայաստան,—մեզ ծաղրում էին։ Այժմ երևի տեսնում են որ մեր միտքը ուղիղ էր։ Ներսէսը մնալով Կ. Պոլսի մէջ, նրա ոյժերը անդամալոյծ են լինում նրան շրջապատող խարդախ շրջանի մէջ։ Եթէ ազգային ժողովը լինէր Վանի կամ Էրզրումի մէջ, նա կաղատվէր գանազան Դաղեանների, Աբրահամ փաշաների, Բալեանների և նրանց նմանների խարդախ և շահասէր ազդեցութիւնից։ Եւ եթէ մինչև անգամ Ներսէս մնար էլ Կ. Պոլսում, բայց ազգային ժողովը գտնվէր Հայաստանում, պատրիարքը անկախ կը լինէր Կ. Պոլսի շահամոլ հայ փաշաների ներգործութիւնից և իր գործունէութեան, իր ոյժի յենակէտը կունենար Հայաստանի որ և է կենտրոնի մէջ, որտեղ կը գտնվէր ազգային ժողովը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԲԱՐՕՆ Ա. Պ. ՆԻԿՈԼԱՅ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

—

Այս վերնագրով „Кавказскій Курьеръ“ լրագրի մէջ տպված է հետևեալ յօդուածը։

Յունիսի 25-ից Թիֆլիսի հիւր է ժողովրդական լուսաւորութեան մինիստր բարօն Ա. Պ. Նիկոլայ։ Նրա ներկայութիւնը մեր քաղաքի մէջ, որ Կովկասի հետ միասին նրա համար զրեթէ մայրենի է, պէտք է օգտակար ազդեցութիւն գործէ մեր երկրի ժողովրդական լուսաւորութեան գործի վրա։ Բարօն Ալէքսանդր Պավլովիչ Կովկասի պետական գլխաւոր գործիչներից մէկն էր և նախկին թագաւորութեան մեծ վերանորոգութիւնները, որոնք ամբողջապէս կամ մասամբ իրագործված են մեր երկրի մէջ, կատարվել են այն ժամանակ, երբ բարօն Նիկոլայ Կովկասեան գլխաւոր կառավարութեան կառավարիչն էր։ Ով իմանում է, թէ ինչպիսի հեղինակութիւն ունէր բարօնը այդ պաշտօնը կատարելու ժամանակ, նա կը հասկանայ, թէ այժմեան մինիստրը ինչպիսի դեր է կատարել մեր երկրի պետական և քաղաքային կազմակերպութեան գործի մէջ։

Նա շատ բան է արել մեր երկրի համար և աւելի շատ կարող է անել այժմ, շատացնելով միջնակարգ ուսումնարանների թիւը, որոնց կարօտ է մեր երկիրը։ Օգտվելով նրա ներկայութենից, Թիֆլիսը պէտք է խնդրէ նրանից Կովկասեան համալսարանի հիմնելու մասին, որի բացակայութիւնը մեր երկրում խանգարում է բարձր ուսում ստանալու գործին։ Պ. մինիստրը, որ լաւ ծանօթ է մեր երկրի զանազան ազգութիւնների հետ, երևի կը համակրէ նրանց հոգևոր միութեանը լուսաւորութեան բարձր ազբիւրի օգնութեամբ, որ պայմանաւորված կը լինի յարգանքով դէպի կովկասեան ժողովրդների լեզուները, որոնք նրանց ամենաթանդագին սեփականութիւն են կազմում։ Կովկասեան համալսարանի հակառակորդների ենթադրութիւնները չափազանց աննշան են, որ անկարելի լինի Թիֆլիսում հիմնել Կովկասեան համալսարան։ Այդպիսի միակ պատճառը միջնակարգ ուսումնարանների պակասութիւնն է Կովկասի մէջ, հետևապէս և ուսանողների պակասութիւնը Կովկասեան համալսարանի համար։ Բայց միթէ Կովկասեան համալսարանը բացառապէս Կովկասի համար կը հիմնվի, ինչպէս իրաւացի նկատում է „Մշակ“։ Միթէ Մոսկվայի համալսարանը միայն Մոսկվայի նահանգի համար է հիմնված, Պետերբուրգինը Պետերբուրգի համար, Կիևինը Կիևի համար,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 26 յունիս 81

Այս շաբաթ բոլոր ուշադրութիւնն իս գրաւող խնդիրը Անգղիոյ խորհրդարանին մէջ յունիս 24-ին տեղի ունեցած վիճաբանութիւններն էին։—Թայմզի յունիս 25-ի թիւը ձեռք ձեռք կանցնէին. շոգենաւերու, թրամուէյներու մէջ, ակումբներու մէջ Թայմզ կը կարդացուէր, Թայմզ կը թարգմանուէր։ Պ. Կլատսթնի խօսքերն «this most important Armenian question» —հայկական այս ամենակարևոր խնդիրը» մեծ տպաւորութիւն ըրին ամենուն վրայ։ Այս անգամ կը տեսնենք որ պարզ խոստում մը կամ երկրորդական յայտարարութիւն մը չէ որ կըլլայ։ Պ. Կլատսթն եւրոպական տէրութեանց միաբանութիւնը անհրաժեշտ կը համարի արեւելեան խնդրոյ լուծման համար, և այդ միաբանութեան գոյութիւնը կը հաղորդէ։ Հայկական հարցը արեւելեան խնդիրներու մէջ կարևորագոյն դիրք մը գրաւած ըլլալը յայտարարելովը պ. Կլատսթն յայտարարած կըլլայ թէ այդ հարցն ալ նոցա միաբան հաճութեամբը կարգադրուի պիտի։ Արդէն պ. Զառյս Տիլք առաջին նախարարէն առաջ բացորոշ կերպով նմանօրինակ յայտարարութիւնը ըրած է։ Յունիս 3-ին «Մշակի» գրած եմ թէ հոս տեղի տաճիկ թերթերուն ըսածին հակառակ են մեր ստացած տեղեկութիւններն, և թէ եւրոպական միաբանութիւն մը հաստատուած է Հայաստանի բարեկարգութեանց խնդրոյն համար։ Անգղիոյ պաշտօնէից յայտարարութիւններն կը հաստատեն Կ. Պոլիս աղեկ տեղեկութիւն ունեցող շրջանակներու մէջ տարածուած այս լուրը. սակայն սա ալ ըսած ենք և կըսենք թէ այդ միաբանութիւնը եթէ սկզբունքին վրայ կատարեալ է, գործադրութեան ժամանակին համար համամիտ չեն։ Անգղիոյ նախարարներն իրենց յատուկ պատճառներն ունէին այս բանս չըսելու համար, սակայն մենք մեզմէ ծածուկ պահելու պէտք մը չունինք։ Կը փափագենք որ Կ. Պոլսէն այժմ բացակայ եղող մեծ տէրութեանց դեսպաններէն մին մեր խնդրոյն համար նոր հրահանգներով դառնար ի Պոլիս։ Այս առթիւ սա ըսենք որ Թայմզի մէջ հրատարակուած մէկ հեռագիրն, իբր թէ Ալէքսանիա համամիտ չէ որ այժմ հայկական բարեկարգութեանց խնդիրը առաջ քշուի, Կ. Պոլսոյ վագրթի մէկ լուրն է որ ստոյգ ըլլալու երաշխաւորութիւն մը չընծայէր։ Այն երկիւղը, որ Անգղիոյ խորհրդարանին մէջ ալ յունիս 24-ին յայտնուեցաւ թէ՝ եթէ Հայաստանի բարեկարգութեանց գործադրութիւնը ուշանայ՝ Հայաստանի մէջ մեծամեծ չփոթութիւններ կրնան ծագիլ, այդ երկիւղը եթէ մեզերու մէջ յառաջադիմութիւն ընէ այն ատեն շատ յոյսեր կրնանք ունենալ։— Հայաստանէն և Կիլիկիայէն եկած տեղեկութիւնները կը հաստատեն թէ օրէ օր հայոց վիճակը կը դառնանայ և կառավարութեան խստութիւնները կը սաստկանան։ Մեր լրագիրները ոչինչ կրնան գրել, զի անմիջապէս կը ջնջուին. թղթակիցներն ալ անհատներու նամակ գրելու կը զգուշանան, վասն զի կը վախեն թէ բօսթը կը բանայ։ Այս պատճառով նամակներն քիչ կուգան, բայց վերջապէս կուգան և քիչով կը հասկցնեն։—Այս առաւօտ նամակ մը ստացայ որ ի միջի այլոց սա լուրը կուտայ «անցեալ տարի սովի ատեն կառավարութեան չտեմարաններէն ցորեն բաժնուեցաւ կամ թէ փոխ տրուեցաւ գիւղացւոց, այժմ տեղական իշխանութիւնը այդ ցորենները ուն գինը կը պահանջէ. աղքատ գիւղացիները ամբողջապէս տալու կարող չեն, ամեն տեսակ բռնութեան կենթարկուին։ Սովու ատեն ցորենը ինչ գին որ ունէր հիմայ այդ գինը կը պահանջեն։ Մուշի Ս. Դանիէլի վանքի գիւղերէն մէկէն 48 ոսկի կը պահանջէր տեղական իշխանութիւնը, երբ գիւղացիք անմիջապէս չը կրցան տալ, տեղական իշխանութիւնը շատերը բռնել տուաւ և հերթերնին աղբով ծեփել տալով, ուրիշներ կրակ վարել տալով մերկ ոտքով զանոնք կրակի վրայ կայնեցուց ու կամաց կամաց սկսաւ այրել տալ։ Այս լուրին ստուգութեանը կատարելապէս կերաշխաւորեմ. և եթէ օտար թերթերու մէջ ալ արտատպուի, և ի հարկին քննութիւն ալ ընել ուզուի, հաստատելու պատրաստ եմ։ Սովու օրեր փոխ տրուած պատառ մը հացի համար այսօր հայերը այրել! Եւ դեռ արդիօք ինչ խելքէ մտքէ չանցած ոճիրներ կը գործուին Հայաստանի ամեն անկիւնները և մենք ոչինչ կիմանանք։

Անգղիոյ խորհրդարանի երեսփոխաններն առանք ամենքը չեն գիտեր, բայց վերիվերոյ գաղափար մը ունին և կենթադրեն թէ համբերութիւնն ալ չափ մը ունի։ Արդեօք չը պիտի գայ օր մը որ մտածենք թէ «կամացուկ կրակով այրելը լաւագոյն է թէ արիւնի մէջ թաթախուելով մեռնելը»։—Յունիս 12/24-ի հնաւոր նիստն քանի մը օր վերջը լորդ Տըֆրէն պատրիարքին այցելութեան եկաւ։ Այս այցելութեան մասնաւոր կարևորութիւն ընծայած ըլլալով առաւօտեան թերաբիայէն հեռագրով հաղորդած էր պատրիարքին։— Պ. Կոչէնի օրով եղած խորհրդակցութիւնները, լորդ Տըֆրէնի ընդունած նոր հրահանգներն, բարեկարգութեանց անհրաժեշտ սեպուած կէտերն այն տեսակցութիւնը գրաւած են։—

Ի՞նչ կը յուսայ պատրիարքը։ Շատ յայտնի է որ Բ. Դուռը զմեզ խաղցնելու, խաբելու քաղաքականութիւնէն ամենևին չեղել չուզէր. վերջի օրերս իսկ գրուած դանդաղի գրերուն իսկ պատասխան մը չը տար։ Պատրիարքը որ երկու ամիսներու համար իր հրաժարականը հետ առած էր, յուսալով որ կառավարութիւնը քիչ մը կը սթափի, կը տեսնէ որ այս սթափումը տեղի պիտի չունենայ։ Երէկ Ազգ. ժողովը գումարեցաւ. պատրիարքը յայտարարեց թէ քանի մը օրէն յունիս ամիսը կը վերջանայ, հետևաբար ինքն յուլիս 1-էն հրաժարական է, զայս ըսաւ և մեկնեցաւ։ Ժողովը այս նիւթին վրայ բաւական վիճաբանութիւններ ըրաւ. փոքրամասնութիւն մը, որ պատրիարքի հրաժարվիլը կուզէր, խելացի կերպով չարժեցաւ, հասկացաւ թէ ազգին շահուցը հակառակ է այս հրաժարելը, ազգային կարծիքը իրեն հետ մէկտեղ չը պիտի ըլլայ, ուստի իր դիտաւորութիւնէն ետ կեցաւ, յուսալով միանգամայն որ Ներսէս սրբազան եթէ այս անգամ ալ մնայ, կարող պիտի ըլլայ աւելի զօրաւոր կերպով աշխատել։—Ժողովը ըմբռնած է թէ Հայաստանի բարեկարգութեանց խնդիրը Ներսէս սրբազանի վրայ միայն չէ կայացած։ Աստուած մի արասցէ, եթէ սրբազանը յանկարծ վախճանի, ինչպէս ժողովին մէջ դիտել տուաւ երեսփոխանին մէկը, արդեօք 61-րդ յօդուածը եւրոպական կառավարութեանց պիտի վերադարձնենք, ըսելով թէ այլևս դա պէտք չէ։ Բայց միւս կողմանէ ժողովը նաև լաւ հասկացած է թէ՝ քանի որ Ներսէս ողջ է, քանի որ կարող է

Օդեսայինը Օդեսայի համար և այլն և այլն։ Համալսարանների այդպիսի սահմանափակ շրջաններ ճանաչելով, կարելի է ամեն բան շփոթել, կամ թէ չէ դիտմամբ աղաւաղել համալսարաններ հիմնելու միտքը։ Օրինակ Կովկասեան համալսարանը բազմաթիւ առաւելութիւններ կունենայ Ռուսաստանի այլ համալսարաններից, որովհետև Կովկասի բնական հարստութեան և օդի լաւութեան պատճառով Ռուսաստանի ներքին նահանգներից բազմաթիւ երիտասարդներ կը մտնեն Կովկասեան համալսարանը, հետևապէս նա պակասութիւն չի զգայ ուսանողների մէջ։ Բայց թէ ինչպիսի բարիք կանվի Կովկասին նրա մէջ համալսարան հիմնելով, դրա մասին կարելի է կազմել գաղափար այն արտասուքներից, որոնք թափվել են և թափվում են շատ կովկասցիներից իրանց երեխաների համար, որոնք կորել են հիւսիսում, աշխատելով բարձր ուսում ստանալ։

Ժամանակ է սօփեստութիւնները մի կողմը թողնել, ժամանակ է գործին իրաւացի և առողջ տեսակէտից նայել և, օգտվելով մինիստրի ներկայութիւնից Թիֆլիսի մէջ, խնդրել նրանից Կովկասեան համալսարանի հիմնելը 'ի յիշատակ Հանգուցեալ Կայսր Ալէքսանդրի, իբրև Լուսաւորող-Թագաւորի արժանի արձան։

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊԼՕՅՑ

—

Յուլիսի 1

Կարդացինք ու համբերեցինք մինչ վերջացաւ նոյն իսկ համբերութիւնը, բայց դեռ ևս չը վերջացան «Մեղուի» յարձակումները Ս. Պարսամեանցի ուրուականը, ինչպէս երևում է, երբէք չը պիտի դադար տայ այն լրագրին, որ դեռ չարունակ գրում է նրան վիրաւորելու համար։ Եւ այս միայն նրա համար որ պ. Պարսամեանցը անցեալ տարուայ «Մշակի» և «Մեղուի» մէջ տեղի ունեցած ազգային միութեան հարցի բանակռիւի ժամանակ, յայտնեց մի և նոյն անհերքելի կարծիքները, ինչ որ յայտնեցին, բացի նրանից և ուրիշ հարիւրաւոր ազգայիններ չօշափելի փաստերով և ապացոյցներով։ Բայց միակ դրդիչ չարժառիթը, որ դրդեց «Մեղուին» տեղալ վիրաւորանք Ս. Պարսամեանցի վրա, մենք գտնում ենք այն երևոյթը, որ Պարսամեանցը, ուրիշ շատերի նման, չը յայտնեց այս կամ այն ճշմարտութիւնը լրագրական էջերում պատսպարուած կեղծ անունների տակ, այլ երևեցաւ գրականական ասպարիզում միշտ իր իսկական ստորագրութիւններով։ Եւ հաստատապէս համոզված ենք մենք, որ եթէ նա՝ պ. Պարսամեանցը դուրս գար հրապարակ յայտնելու իր կարծիքները ծածկված անյայտութեան քօղի տակ, այդ թերթը երբէք չը պիտի գործ դնէր իր սովորական փոքրահոգութիւնը՝—դուրս գալու ասպարէզ, ոչ թէ փաստօրէն հերքելու իր հակառակորդի ասածները և հաստատելու նրա գրուածքի անհիմն լինելը, այլ որպէս թշնամի միայն մրոտելու նրա անձնաւորութիւնը, ուրիշ ոչինչ։ Եւ երբ այդ լրագիրը չէ վարվել այսպէս։ Երբ այդ լրագիրը իր ֆելիետոններով չէ յարձակվել այն անձնաւորութեանց վրա, որոնք տուել են ուղղակի նրա երեսին իրա պակասութիւնները։ Մինչև անգամ այդ անձնաւորութեանց ընտանեկան գաղտնիքը, նրանց անձնական պարապմունքները, նրանց ֆիզիկական պակասութիւններն անգամ ծառայել են շատ անգամ երկար ժամանակ, իբրև նկարագրութեան նիւթ, բաւականութիւն տալու այդ լրագրի այս կամ այն կարդիզին։ Շատ օրինակներից յիշենք այստեղ միայն մէկը։ Յիշենք, օրինակի համար, վերջին միջոցներումս, այդ լրագրի բռնած ընթացքը «Մշակի» եռանդոտ աշխատակից պ. Գ. Նիկողոսեանի դէմ։ Մինչդեռ այդ անվեհեր կրիտիկոսը ամենայն իրաւամբ մորակում է յաջ և ահեակ տոճկա-հայոց բարոյական ախտերը, այն ախտերը, որոնք սրանից դեռ հինգ տարի առաջ հրատարակում էր հայ աշխարհին «Մշակը», «Մեղուն» այստեղ էլ գործ է դնում իր կատարեալ ստրկական յատկութիւնը։ Էլի բռնած մեծամտութեան պուչից, նա փորձ է փորձում նրան հաճելի դառնալու համար, լռեցնել ճշմարտութեան ձայնը։ Բայց ճշմարտութիւնը, ինչպէս միշտ, այնպէս էլ այստեղ լաւ դառն դաս էր պատրաստել, պատուհասելու խարդախ նենգաւորներին։ Դրանց քիթ ու բերանը այս անգամ էլ ջարդվեց նոյն իսկ այն մեծամտութեան կարծիքի առաջ, որի պակասութիւնների և նախապաշարմունքների յառաջ սովոր են միշտ ծնրադրել «երկրպագու չողոքորթները»։ Եւ ճանաչում է հետզհետէ այդ մեծամտութիւնը իր անձնազոհութեամբ գործող հաւատարիմ գաւակներին. նա հետզհետէ ընդունակ է դառնում զանազանելու «հոգի ուներող» ազգային գործիչներին «անհոգի շարժուն դիակներից», «փտած մղձսիքը»—«կենդանի թարմ ուժերից»։

Մենք հեռու ենք պ. Պարսամեանցին պ. Գ. Նիկողոսեանցի կամ սրա նմանների հետ հաւասարելու դիտաւորութիւնից, բայց գտնում ենք համանմանութիւն այն խաղերի մէջ, որը միշտ խաղացել է և խաղում է այսպիսիների դէմ «Մեղուն»։

Մենք կրկնում ենք՝—«ազգային միութեան հարցի» բանակռիւի ժամանակ, պ. Ս. Պարսամեանցը ասաց այն՝ ինչ որ ասացին նրանից յառաջ չատերը և ինչ որ հաստատեցին նրանից յետոյ դարձեալ չատերը։ Բայց տեղացին վիրաւորանք նրա վրա ոչ այն պատճառաւ որ՝ չէին ճշմարիտ նրա յայտնած կարծիքները, այլ այն պատճառաւ որ նրա յօդուածները երևում էին «Մշակի» էջերում իր իսկական ստորագրութիւններով։ Թող նրանք, որոնք սովոր են միշտ չօշափել այսպիսի անձնաւորութեանց պատիւը, թերթեն միւս անգամ Ս. Պարսամեանցի յօդուածները։ Եւ այս խորհուրդը տալիս ենք, ոչ թէ նրանց ատելութեան մաղձը նորից գրգռելու համար, այլ նրա թղթակցութեանց մէջ յայտնուած ճշմարիտ կարծիքների հետ նորից ծանօթացնելու համար։

Չենք ծածկում, որ միայն մի բանի մէջ սաստիկ սխալվեց պ. Պարսամեանցը։ Փոխանակ անվրդով և անսասան ընթանալու իր ընտրած ուղղութեան մէջ մինչ կատարելապէս կը կորզվէին դիմակները կեղծաւոր և խարդախ անձնաւորութեանց երեսներից, եռանդից մղուած, մատաւ պայքար, գրականական ասպարիզում, այն անձանց հետ, որոց աչքերը համահաւասարապէս ծակում է միշտ՝ թէ «Մշակի» ծառայական ազդեցութիւնը և թէ նրա աշխատակիցների կրիտիկական ուղղութիւնը։

Պատասխանել ամեն բանի,— ահա թէ ինչ բանում սխալ գտնվեցաւ պ. Ս. Պարսամեանցը....

Շատերից-մէկը

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԻՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Յուլիսի 2-ից ստացված տեղեկութիւնների համեմատ Պրագայի մէջ նոր անկարգութիւններ չեն պատահել, բայց մի նոյն ժամանակ գերմանացի ոչ մի ուսանող չէ համարձակվում դուրս գալ փողոցը։ Ասում էին, որ երեկոյեան նոր ցոյցեր պէտք է լինեն, բայց ոչ թէ գերմանացիների, այլ հրէաների դէմ, որոնք վերջին ընարութիւնների ժամանակ առևտրական պալատի համար օգնեցին գերմանացիներին։ Պոլիցիայի կառավարչին հրէաների մի պատգամաւորութիւն ներկայացաւ և խնդրեց նրա պաշտպանութիւնը։ Պոլիցիան բոլոր միջոցները գործադրել է անկարգութիւնների առաջն առնելու համար։

Անկարգութիւն գործողներից շատերը կալանաւորված են և նրանց թւում ընդամենը երկու չեխ ուսանողներ կան, այնպէս որ չեխական ուսանող երիտասարդութեանը 'ի զուր էին մեղադրում, թէ նա մասնակցում էր վերջին ցոյցերին գերմանացիների դէմ։ Չեխական ուսանողները բողոքեցին այն մեղադրանքի դէմ, իբր թէ նրանք մասնակցել են անկարգութիւններին։ Կալանաւորվածները գլխաւորապէս բանուորներ և արհեստաւորներ են, որոնց ատելութիւնը դէպի գերմանական տիրապետութիւնը այդպիսի կոպիտ ձևով արտայայտվեցաւ, իսկ այդ կոպտութեանը և բռնութիւններին չեխական ազգութեան ինտելիգենտ մասը բոլորովին չէ համակրում։

ՖՐԱՆՍԻԱ

—

Մինիստրների խորհրդի մէջ պատերազմական մինիստր գեներալ Ֆարը խստութեամբ բողոքեց Ժիւլ Ֆերրիի դէմ, որ կամենում էր Այժիրիայի մէջ պատահող անցքերի պատասխանատուութիւնը Ֆարրի վրա բարձել։ Երկար վիճաբանութիւններից յետոյ Ֆարը, Կազը և Կոնստան մինիստրները յայտնեցին, թէ նրանք կը թողնեն իրանց պաշտօնները, եթէ Ալբեր Գրեվի չը հրաժարվի Ալժիրիայի նահանգապետի պաշտօնից։

գործելու, պէտք է նա գործին գլուխը կենայ։ Եթէ հզօրագոյն պատճառով մը արգելուի գործելէ, ինչ կրնանք ընել. բայց Ներկայ պարագայից մէջ իր հրաժարելն կամ դնա հրաժարեցնելն ազգի մէջ գժտութեան, խռովութեան դուռ բանալ է, եղած գործերն ալ արել է. և այս բանս միայն մեր թշնամիները կուրախայնէ։ Ազգ. ժողովը այս ամեն ճշմարտութեանց վերահասու, և գիտենալով նաև որ թիւրք կառավարութիւնն ալ կուզէ Ներսէսի քաշուիլը, հրաժարականը մերժեց։ Ժողովը պատգամաւորութիւն մը ընտրեց, աշխարհականներէ, եպիսկոպոսներէ, վարդապետներէ, քահանաներէ բաղկացեալ, որ երթայ սրբազանի ազաչէ որ հրաժարականը ետ առնու։ Պատգամաւորութիւնը անմիջապէս գնայ սրբազանի մօտ, բայց չը կրցաւ դնա համոզել։—Գործը այս վիճակին մէջ ըլլալով, որոշուեցաւ որ երեքշ. յունիս 30, Ներսէսի պատրիարքութեան վերջին օրը, Ազգ. ժողովը արտաքոյ կարգի գումարում մը ունենայ, նիստը դռնփակ ըլլայ, և այս խնդրոյն վրայ խօսուի։ Քանի որ նիստը դռնփակ պիտի ըլլայ, անշուշտ պատրիարքը ուզածին պէս կարող պիտի ըլլայ յայտնել այն պատճառները որ կը ստիպեն զինքն հրաժարիլ։ Երէկ և այսօր տեսակցեցայ այս գործերուն լաւ տեղեկութիւն ունեցող երեսփոխաններու հետ, անոնց կարծիքն է որ պիտի յաջողին յունիս 30-ին պատրիարքին հրաժարականը ետ առնել տալ։—Այս առաւօտ, երեսփոխան մը որ թէ ժողովոյ մէջ և թէ ազգային կենսական գործոց մէջ մեծ դեր կատարած է և կը կատարէ, պատրիարք սրբազանի մօտ գնայ։ Այս երկուքին յարաբերութիւնները լաւ չեն, բայց զոհողութիւն պէտք է։ Տեսակցութիւնը պիտի ըլլայ հրաժարականի խնդրոյն վրայ, ներքին գործոց կարգադրութեան վրայ, և մեր ունենալիք քաղաքական ուղղութեան վրայ։ Ես կը յուսամ թէ երեսփոխանը պիտի յաջողի պատրիարքը համոզել, և յուլիս 1-էն ազգի գործերն այնպիսի ճամբու մը մէջ մտնեն որ ընդհանուր գոհունակութիւն պատճառեն։

Ազգ. ժողովոյ երէկուան նստին վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւններ գուցէ հետաքրքրական չըլլայ ձեզ։ Նոր շրջանի բացումէն ի վեր, ժողովը աւելի պատկառելի կերպարանք մը սկսած է առնուլ։ Երեսփոխանք շատ բազմաթիւ կուգան և Գիւանը լաւ կը կառավարէ։ Միայն կը նշմարենք որ խօսելու փափագը մեծցած է։ Եթէ ժողովը քանի մը գլուխներ ունենայ և անոնք խնդիրներն պարզեն՝ լաւագոյն կըլլայ, բայց գլուխ ըլլալ ուզողները շատ են։ Խորհրդարանական կեանքի վարժելու համար մեզ դեռ շատ ժամանակ պէտք է. ժամանակը և փորձառութիւնը շատ բան պիտի ընեն, բայց աղէկ կըլլայ որ քիչ մը կանխենք և շուտ սորվենք. մենք սովորական վիճակի մէջ չենք։

Երէկուան ժողովին մէջ խնդիր մը յուզուեցաւ որ եթէ ընդունուի, ժողովին պատիւ կը բերէ։ Ազգային լաւ դաստառ մը, Մալեզեան պատուելի, վախճանեցաւ այս օրերս։ Ժողովոյ մէջ առաջարկուեցաւ որ ազգային ժողովոյ որոշմամբ և ազգին սնդուկէն ծախքը վճարուելով շիրիմ մը կանգնուի հանգուցեալին վրայ։ Պատրիարքը, Նար-Պէյ, փափագեան պաշտպանեցին այս առաջարկը, որ նախաձեռնութեան դիւանի զրկուեցաւ և անոր բերած տեղեկագրին համեմատ պիտի ընդունուի։—Մեր ամենէն մութ օրերուն մէջ Մալեզեան ազգային դաստիարակութեան ինքզինքն նուիրած էր. յիսուն տարի անդադար աշխատած է, ոչ իբր վարձկան մը, այլ իբր հայ մը որ ազգին մարդեր պատրաստելու կը աքնի, և յաջողած է։—Երբ մեր վարժապետներուն երախտապարտ ըլլանք, յարգենք, մեծարենք զանոնք ու վարձատրենք, մարդ ըլլալու, մեզ ապագայ պատրաստելու ամենէն կարևոր միջոցներէն մին ձեռք առած կըլլանք։—Ազգ. ժողովը ինքն ալ վերահասու եղած է այս պարզ ճշմարտութեան և անոր համար կուզէ հանգուցեալ Մալեզեանը մեծարելով, վարժապետներու դասը փառաւորել։ Երանի թէ ազգային դաստիարակութեան ամեն խնդրոյ մէջ ալ իմաստուն ուղղութեամբ վարուէր։ Քանի տարիէ ի վեր է դեռ ժողովը դաստիարակութեան խնդրով չէ զբաղած, հիմա ընդարձակ ծրագիր մը պատրաստուած է, տեսնենք քննութիւնը քանի տարիէն պիտի աւարտի։

Մենք այս խնդիրներով զբաղված ատենիս, մեր հռովմէական հայերն ալ պատրիարք Կաթողիկոսի ընտրութեամբը կը զբաղին։

Ազարեան գերապայծառ քուէից առաւելութեամբ կաթողիկոս-պատրիարք ընտրուեցաւ, և իբր Կաթողիկոս Պետրոս տաներորդ անունը կառնու։

Արդէն ձեզ գրած էի թէ Ազարեանի ընտրութիւնը ամենէն հաւանական է, մանաւանդ որ Հռովմ զայս կուզէ։ Ազարեան նկատուած է Հասունի alter ego-ն։—Այս ընտրութեամբ հռովմէական հայոց մէջ խաղաղութիւն կը վերցուի, որ չը հաստատուի, մանաւանդ որ հասունեան մասն ալ բաժանումներ ունենայ։—Ամեն խոհեմ հռովմէական հայեր կը փափագէին որ այնպիսի անձ մը ընտրուի որ այս վերջին տարիներս պատահած դէպքերուն մէջ այնքան կռուող դեր մը կատարած չըլլար, և ազգին չահերը կրօնական նեղ գաղափարներու զոհող չըլլայ։—Արդէն այսօրուանէ սկսած են բողոքները ընտրութեան եղանակին դէմ։—Կարելի է որ Ազարեան գերապայծառ ուզէ անցեալը մոռցնել տալ, և իր ժողովուրդին ամեն մասերը չահի։ Եթէ իր բարի դիտաւորութիւնները տեսնուի, անշուշտ իրեն դէմ արգելքներ չեն յարուցաներ, մանաւանդ 15 տարիներու կռիւներով հայ հռովմէական ժողովուրդը հոգնած է։—Մեզի համար պէտք եղած կէտը այն է թէ ընդհանուր հայոց վերաբերեալ բարեկարգութեանց խնդրոյն մէջ ինչ դեր պիտի խաղայ Նորընտիր Կաթողիկոս-պատրիարքը։ Երբ փոխանորդ էր, օր մը կը յայտնէր ոմանց թէ ինքն ամենայն ջերմութեամբ Հայաստանի ինքնօրինութեան փափագողներէն է։ Մենք ալ փափագող ենք որ այս այսպէս ըլլայ. բայց միւս կողմէ սա ալ գիտենք որ հռովմէական կղերը այդ եկեղեցւոյ արևելքի մէջ տարածմանը արգելք կը համարի Հայաստանի ինքնօրինութիւնը։—Ուրիշ ատեն լսեր ենք թէ Բերլինի վեհաժողովի ժամանակ ինչ տխուր դեր կատարեցին և Տիւֆօրի վրայ պէտք եղած ազդեցութիւնը ըրին, որպէս զի Վատիկանն միակ յունաց հարցը պաշտպանելով գոհանայ։—Աւստրիոյ, մանաւանդ Ֆրանսայի կոթնած Վատիկան կրնայ մեզ համար չատ վնասակար ըլլալ։ Բայց իմաստութիւն է այս երբ հայերն այս համոզումը ունենան թէ Հռովմայ եկեղեցին իրենց ազգութեան վերաբերեալ կանգնմանը թշնամին է. ամենուս սրտին մէջ անհաշտ ատելութիւն մը կենդանի պիտի մնայ այդ եկեղեցւոյ դէմ, և ով պիտի մեղադրէ զմեզ ինչ պիտի չահի Հռովմ այս ատելութիւնն, ինչ յառաջադիմութիւն ընելու կարող պիտի ըլլայ բնելը։—Հռովմէական հայերն ալ բոլորովին կուրօրէն իրենց կարդինալներուն նեսէն չեն երթար։ Բ. Դուռը միշտ հռովմէական հայերը միշտ մեզ դէմ զրգռելու աշխատած է, և ներկայ պարագայից մէջ կուզէ զանոնք իրեն գիւանական գործիք մը ընել։—Տեսնենք Պետրոս Կաթողիկոսը պիտի ստորագրէ Ղ. Ուրանի և Աւետ